‹‹ՄԵՂՐՈՒ ՏԲԿ›› ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ‹‹ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ›› ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2»

ք.Մեղրի <<18>> մարտի 2019թ.

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Աշոտ Բեգլարյանը (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ>> մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ապրանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը ՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ապրանքի մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ապրանքը ընդհանուր գինը կազմում է 960300 (ինը հարյուր վաթսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30-ը դեկտեմբերի 2019թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման, ինչպես նաև գնորդի մոտ քանակի պահանջի նվազման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է __9__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ	Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42	ՀՀ Մեղրի , Իսահակյան 22Ա
Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ” ՓԲԸՄեղրու մ/ճ	Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակի մ/ճ
Հ/Հ 16099-003354200	Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 78663815
էլ.փոստ agarak-hosp@mail.ru	էլ. հասցեն՝ ashotbeglaryan72@mail.ru
Հեռ. 0286-60685	Հեռ. 077-252577
Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան	Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057 Դ.Տ. Date: 2019.03.18 11:50:43 GMT+04:00	Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047 Դ.Տ.

Հավելված 1
<<_18_>> մարտի 2019թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	34331300	Նիվա ստարտեր	հավաքածու	1	37000	37000
2	34311160	Նիվա սվեչա	հատ	4	1100	4400
3	34321130	Նիվա տորմուզի դեմի արգելակման կոճղակ	հավաքածու	2	7000	14000
4	34321130	Նիվա տորմուզի հետևի արգելակման կոճղակ	հավաքածու	2	9000	18000
5	34331300	Նիվա շարժիչի ջրի պոմպ	հավաքածու	1	11000	11000
6	34331300	Նիվայի շարժիչի ռեմեն	հատ	2	1800	3600
7	34331300	Նիվա կարբյուրատոր	հատ	1	35000	35000
8	34331300	Նիվայի շարժիչի յուղի ֆիլտր	հատ	2	2200	4400
9	34331300	Նիվա-ի կամեռ	հատ	2	6500	13000
10	34331300	Նիվա-ի դեմի ամորտիզատորի ռեզին տուլկի	կոմպլ	2	3500	7000
11	34331300	Նիվա-ի հետևի ամորտիզատորի ռեզին	կոմպլ	2	1500	3000
12	34331300	Նիվայի ակումյատոր 62Ah, 560	հատ	1	50000	50000
13	34331300	Նիվայի ռադիատորի կրիշկա	հատ	1	1000	1000
14	34331300	Նիվայի շտանգի ռեզիններ	կոմպլ	2	4500	9000
15	34331300	Նիվայի կարճ շտանգաներ	հատ	2	2400	4800
16	34331300	Նիվայի երկար շտանգա	հատ	2	4600	9200
17	34331300	Նիվայի շառավոյ	հատ	4	4200	16800
18	34331300	Նիվայի զարյադկի ռելե	հատ	2	1500	3000
19	34331300	Նիվայի կոմուտատոր	հատ	1	7500	7500
20	34331300	Նիվայի 6 ծականի մյախկի	հատ	1	7200	7200
21	34331300	Նիվայի դինամո	հատ	1	30000	30000
22	34331300	Նիվայի հետևի ամորտիզատոր	հատ	2	6000	12000
23	34331300	Ֆորդ Տրանզիտի ակումյատոր 75 Ah 720	հատ	2	61000	122000
24	34331300	Ֆորդ Տրանզիտի Ամառային անվադող 215/75/R16C	հատ	4	53000	212000
25	34331300	Ֆորդ տրանզիտի շարժիչի յուղի ֆիլտր	հատ	1	7000	7000
26	34311160	Ֆորդ տրանզիտի սվեչա	հատ	4	1600	6400
27	34331300	Ֆորդ-տրանզիտի տորմուզի	հավաքածու	1	23000	23000

		հետեվի արգելակման կոճղակ				
28	34331300	ՋԻՆԲԵՅ մակնիշի յուղի ֆիլտր	հատ	5	3481	17405
29	34331300	ՋԻՆԲԵՅ օդի ֆիլտր	հատ	1	4000	4000
30	34331300	ՈՒԱԶ-ի ակումյատոր 75Ah 720	հատ	1	61000	61000
31	34331300	ՈՒԱԶ-ի շարժիչի յուղի ֆիլտր	հատ	2	3500	7000
32	34321130	ՈՒԱԶ-ի արգելակման կոճղակ	հավաքածու	1	16000	16000
33	34331300	ՈՒԱԶ-ի կարդանի կրեստավինա	հատ	1	8500	8500
34	34331300	ՈՒԱԶ-ի ռադիատորի կռանիկ	հատ	1	4500	4500
35	34331300	ՈՒԱԶ-ի ռադիատորի փեչի շլանգ	մետր	5	2200	11000
36	34311160	ՈՒԱԶ-ի սվեչա	հատ	8	1000	8000
37	34331300	ՈՒԱԶ-ի դինամո	հատ	1	8500	8500
38	34331300	ՈՒԱԶ-ի տրամյորի կրիշկա	հատ	1	1500	1500
39	34331300	ՈՒԱԶ-ի տրամյորի պռովուդկա	կոմպլ	1	6500	6500
40	34331300	ՈՒԱԶ-ի փեչի կռանիկ	հատ	1	5500	5500
41	34331300	ՈՒԱԶ-ի փեչի շլանգ F 14	մետր	5	2200	11000
42	34331300	Ակումյատորի կլեմա	զույգ	4	1200	4800
43	09211100	Շարժիչի յուղ SAE 5W30 API SERVICE SN GF-5	լիտր	25	1800	45000
44	09211100	Շարժիչի յուղ 10W40 API SERVICE SN	լիտր	12	1135	13620
45	09211100	Շարժիչի յուղ 20W50 API SERVICE SG/CD	լիտր	5	1135	5675
46	09211100	տրանսմիսիոն յուղ 80W90	լիտր	1	1500	1500
47	09211100	հիդրավլիկ յուղ (կարմիր) DEXTRON II	լիտր	2	2000	4000
48	34331300	գիպոիդ	լիտր	2	1000	2000
49	34331300	Ժիդկոստ	լիտր	1	3000	3000
50	34331300	Անտիֆրիզ -40	լիտր	52	750	39000
Ընդամենը ինը հարյուր վաթսուն հազար երեք հարյուր ՀՀ դրամ						960300

Նախատեսվում է գնել 2019 թ-ի ընթացքում:Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:

Ապրանքը մատակարավում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 3 օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝

“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ” ՓԲԸՄեղրու մ/ճ մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2019.03.18 11:51:22 GMT+04:00

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Մեղրի , Իսահակյան 22Ա
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակի
Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 78663815
Էլ. հասցեն՝ ashotbeglaryan72@mail.ru
Հեռ. 077-252577

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան

Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047
Date: 2019.03.18 14:45:50 GMT+04:00

Հավելված 2
<<_18>> մարտի 2019թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
անվանումը	դիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստամիսների, այդթվում**									
	մարտի	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Ձեռքբերված ապրանքի	20%	25%	30%	35%	40%	60%	70%	80%	100%	100%

ԳՆՈՐԴ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան

Կ.Տ.

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2019.03.18 11:51:51 GMT+04:00

ՎԱՃԱՌՈՂ՝
Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Մեղրի , Իսահակյան 22Ա
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակի մ/ճ
Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 78663815
էլ. հասցեն՝ ashotbeglaryan72@mail.ru
Հեռ. 077-252577

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան

Կ.Տ.

Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047
Date: 2019.03.18 14:46:38 GMT+04:00

Հավելված 3
<<__18__>> ___մարտի___2019թ. կնքված
N « ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2» *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

- ¦ ¦ *2019*
-

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.

Պայմանագրի համարը « ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2»

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

- Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2019թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

- Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ապրանքները՝
-

N	Մատուցված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ապրանքի մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<__18__>> ___մարտի__2019թ. կնքված
N « ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-19/2» *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. ------- -ին կնքված N ---------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանք		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն